




Փաստ. անվանումը	Ռազմավարական ծրագիր
Հաստատման ամսաթիվը	15.01.2010
Արձանագրության N	թիվ 2
Հաստատող մարմինը	Կառավարման խորհուրդ
Անուն/Ազգանուն/ Պաշտոն	Աշոտ Մարկոսյան, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ
Ստորագրություն	



## Բովանդակություն

Նախաբան.....	4
ԵՄՀ ինքնությունը .....	5
ԵՄՀ Ռազմավարական հիմնական ուղղությունները.....	6
ԵՄՀ արժեքները.....	6
Ռազմավարական նպատակներ.....	7
ԵՄՀ կազմակերպական կառուցվածքը .....	12

Ռազմավարական պլանավորումն իրականացվել է կրթական համակարգում առկա հնարավորությունների և սպառնալիքների համակողմանի ուսումնասիրության հիման վրա՝ հիմք ընդունելով բուհի ուժեղ և թույլ կողմերը: Ռազմավարական պլանավորման հիմքում ընկած են նաև բուհի տարբեր շահառուների կարծիքները, առաջարկություններն ու դիտարկումները՝ հավաքագրված ֆոկուս խմբերի, հարցախույզերի, խորքային հարցազրույցների միջոցով:

Հաշվի առնելով բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները՝ բուհի կառավարման խորհուրդը կարևոր է համարում արագ կողմնորոշվելու ունակությունը, կառավարման ճկուն համակարգը, և այդ փոփոխությունների կանխատեսումն ու նախաձեռնողականությունը (պրոակտիվությունը) համարում է գերակայություն:

Մարդկային ռեսուրսների պարբերաբար վերապատրաստման միջոցով կրթական բարեփոխումների իրականացումը, կրթական բովանդակության վերափոխումն ու համապատասխանեցումը աշխատանքային շուկայի պահանջներին, որակի ապահովման ազգային և միջազգային չափանիշներին անկյունաքարային են բուհը որակապես նոր մակարդակի տեղափոխելու առումով: Բարեփոխումներն անհրաժեշտաբար զուգահեռվում են կրթական միջավայրի և օժանդակ ռեսուրսների անընդհատ կատարելագործմամբ, վերափոխմամբ՝ ժամանակի պահանջներին համապատասխան: Բուհում բովանդակային և կառուցվածքային բոլոր բարեփոխումները նպատակայնորեն ուղղված են թիրախային խմբի փոփոխությանը և բուհի միջազգայնացմանը:

### Տեսական

Վերարտադրել փոփոխությունների պատրաստակամ, սոցիալապես պատասխանատու գործակալների՝ նպաստելով օրինապահ ու մրցունակ հասարակության առաջընթացին:

### ԵՄՇ Առաքելությունը

Համալսարանն իր առաքելությունն է համարում.

- Ապահովել մատչելի կրթություն՝ ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան:
- Իրականացնել բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն՝ նպատակաուղղված աշխատաշուկայի պահանջներին և կարիքներին:
- Ստեղծել համագործակցային միջավայր կրթության շահառուների համար՝ նպաստելով արդիական գիտելիքների, հմտությունների և կարողությունների փոխանցմանն ու տարածմանը:
- Ուսանողների մոտ զարգացնել սովորելու հմտություններ, ինչպես նաև պատրաստակամություն ընդունելու նորը և անընդհատ կատարելագործվելու, նպաստելով գլոբալացվող և անընդհատ փոփոխվող միջավայրում վերջիններիս մրցունակության ապահովմանը: Այս առումով առաջնային է ուսանողների մոտ ԵՄՇ հիմնարար արժեքների զարգացումը (հարատև կրթություն, առաջնորդություն, մարտահրավեր, թիմային աշխատանք, ստեղծագործական մտածողություն):
- Իրականացնել հետազոտություններ՝ ուղղված կրթության բովանդակության արդիականացմանը, միջազգայնացմանը, ինչպես նաև համալսարանի անընդհատ զարգացմանը:
- Իրականացնել ՀՀ սոցիալ-տնտեսական առաջընթացին և միջազգայնացմանը միտված հիմնարար և կիրառական հետազոտություններ:
- Գործունեության արդյունքներին հաղորդակից դարձնել հասարակական լայն շրջանակների՝ տարածելով ձեռք բերված դրական փորձն ու գիտելիքը:

## ԵՄՇ Ռազմավարական հիմնական ուղղությունները



## ԵՄՇ արժեքները

Եվրասիա միջազգային համալսարանը կրթական մի համայնք է, ուր գնահատվում է ստեղծագործական մտածողությունը, նորարարությունն ու նախաձեռնողականությունը: Թիմային ուղղորդված աշխատանքի միջոցով բուհը մինչ օրս կարողացել է դիմակայել կրթական ոլորտում առաջացած մարտահրավերներին՝ երբեմն դրանք ընդունելով սիրով և համարելով անընդհատ աճի երաշխիք: Մենք նախընտրում ենք առաջնորդության և գերազանցության ճանապարհը՝ սերմանելով, զարգացնելով բուհի հիմնարար արժեքները ներքին շահակիցների շրջանակներում: Ապրելով հարափոփոխ դարաշրջանում՝ մենք գիտակցում ենք, որ անընդհատ աճն ու կատարելագործումը և, ընդհանրապես, հարատև կրթությունը դարի պահանջն է: Փոքրաթիվ լսարանները և ուսանող-դասախոս թվի ցածր հարաբերակցությունը, բուհում հնարավորություն է ստեղծում համագործակցային մեթոդների կիրառման միջոցով անհատապես ճանաչելու ուսանողներին՝ զարգացնելով ուսանողների թիմային աշխատանքի հմտությունները, ապահովելով առաջնորդության հնարավորություններ, զարգացնելով ստեղծագործական, վերլուծական մտածողություն և այլն: Այսպիսով, ԵՄՇ արժեքներն են.

Հարատև կրթություն	Առաջնորդություն	Մարտահրավեր	Թիմային աշխատանք	Ստեղծագործություն
<ul style="list-style-type: none"> <li>Բազմազանության գնահատում</li> <li>Ակտիվ ունկնդրման ունակություն</li> <li>Ակտիվ ուսուցման ունակություն</li> <li>Հետադարձ կապի ապահովում</li> <li>Տեղեկատվության կառավարում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ինքնաճանաչման ունակություն</li> <li>Զգայական կոմպետենտություն</li> <li>Էթիկայի պահպանում</li> <li>Նախաձեռնելու ունակություն</li> <li>Կատարելության ձգտում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ճկուն մտածելակերպ</li> <li>Արագ կողմնորոշվելու ունակություն</li> <li>Վերլուծելու ունակություն</li> <li>Հաջողելու կամք</li> <li>Դիմադրելու ունակություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Կայունություն</li> <li>Հարգանքի դրսևորում</li> <li>Համակարգված մտածողություն</li> <li>Արդյունավետ հաղորդակցվելու ունակություն</li> <li>Այլ անհատների թիմ ներգրավելու ունակություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Չկադասարված մտածողություն</li> <li>Նորարարական մտածելակերպ</li> <li>Արդյունավետ որոշումների կայացում</li> <li>Վերջնարդյունքի հասնելու ձգտում</li> </ul>

**Կատարելագործել որակի ապահովման նպատակով ներդրված համակարգը՝ հետևյալ ուղղություններով.**

- ▶ ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի, կրթական ծրագրերի, նյութատեխնիկական բազայի, կառավարման համակարգի որակի գնահատման չափանիշների և մեխանիզմների, գործիքակազմի վերամշակում և գործարկում
- ▶ որակի ապահովման ձեռնարկի ստեղծում
- ▶ բուհի հնարավոր բոլոր գործընթացների ավտոմատացում, տարբեր շահակիցների օգտագործման հնարավորությամբ տեղեկատվական բազայի ստեղծում, որոշում կայացնողների համար վերլուծությունների ստացման մատչելի մեխանիզմների և հնարավորությունների ապահովում, թղթաշրջանառության պակասեցում, աշխատանքների իրականացման վիրտուալ համակարգերի ապահովում,
- ▶ ազգային չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի մշակման, վերամշակման, գնահատման և մշտադիտարկման համակարգի ներդրում,
- ▶ որակի ապահովմանն ուղղված մշակույթի տարածում բուհի շրջանակներում,
- ▶ ինստիտուցիոնալ և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում,
- ▶ կանոնակարգերի վերանայում՝ համալսարանի կազմակերպական կառուցվածքին և առանձնահատկություններին համապատասխանեցում

### Ակնկալվող արդյունքներ

- ✓ Մշակված/վերամշակված են դասախոսի գնահատման չափանիշները (դասավանդման, հետազոտության և հասարակական աշխատանքի) և գործիքակազմը
- ✓ Վերամշակված և տեղայնացված են բուհի բոլոր ստորաբաժանումների և կառավարման մարմինների կանոնակարգերը կազմակերպական կառուցվածքին համապատասխան
- ✓ Վերամշակված է ուսանողների տեղեկագիրը
- ✓ Վերամշակված է դասախոսների գնահատման և առաջխաղացման համակարգը
- ✓ Վերանայված են ուսումնական գործընթացի բոլոր ձևաթղթերը
- ✓ Կրթական ծրագրերը մանրամասն ձևակերպված են՝ ըստ շնորհվող որակավորումների համապատասխան ակնկալվող ուսումնառության արդյունք-ների, մշակված են ԿԾ ամբողջական փաթեթները
- ✓ Վերամշակված և զարգացված է բոլոր հարցաշարերի էլեկտրոնա-յին տարբերակը
- ✓ Ապահովված են մեխանիզմներ՝ որակի ապահովման գործընթացներում ներգրավելու համալսարանի շահակիցներին
- ✓ Ծրագրավորված և գործարկված է ներքին տեղեկատվական համակարգի

“Որակը երբեք պատահականություն չէ, այն ուղղորդված նախաձեռնությունների, անկեղծ ջանքերի, խելացի ու հմուտ կառավարման, բազում այլընտրանքների միջև իմաստուն ընտրության արդյունք է”:

### Կրթական առաջընթացին միտված ծրագրերի, նախագծերի իրականացում.

- Նոր մասնագիտությունների, ծրագրերի ու ֆակուլտետների հիմնում, միջազգային համատեղ կրթական ծրագրերի իրականացում
- Էլեկտրոնային ուսուցման բազայի ստեղծում և խառը ուսուցման իրականացում
- Միջառարկայական և միջմասնագիտական կապի ամրապնդում
- Գործատուի և պետության պահանջներին համապատասխան նոր առարկաների զարգացում
- Բոլոր մասնագիտությունների գծով ընդհանուր ռուսերենի, անգլերենի և համակարգչային գիտելիքների խորացմանն ուղղված ծրագրերի իրականացում
- Համալսարանական բիզնես ինկուբատորի ստեղծում՝ ուսանողների մոտ ձեռներեցության հմտությունների զարգացման նպատակով, ուսումնական գործընթացի արդյունքում ստեղծված լավագույն և իրատեսական նախագծերի ֆինանսավորում՝ վենչուրային կապիտալիստների և համալսարանի կողմից
- Համագործակցային մեթոդներին ուղղված ուսումնասիրությունների կատարում, մեթոդական ձեռնարկների հրատարակում
- Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում հետևյալ ուղղություններով .(i) մասնագիտական, (ii) նորագույն տեխնոլոգիաների կիրառման, խառը ուսուցում (դեմ առ դեմ րվ հեռավար) իրականացնելու նպատակով (blended teaching) (iii) դասընթացի մշակման և կառավարման ուսանողակենտրոն մոտեցումների կիրառման նպատակով

### Ակնկալվող արդյունքներ

- ✓ Յուրաքանչյուր մասնագիտության գծով ներդրված է նվազագույնը մեկ համատեղ միջազգային ծրագիր
- ✓ Դասախոսները վորապատրաստված են խառը ուսուցում իրականացնելու մեթոդիկայով, առկա է էլեկտրոնային դասընթացներ մշակելու խրախուսման համակարգ, որակի ապահովման մեխանիզմներ և չափորոշիչներ
- ✓ Համալսարանի բոլոր դասընթացները մուտքագրված են էլեկտրոնային միջավայր
- ✓ Վերանայված են ուսումնական պլանները՝ շահակիցներից ստացված արձագանքների հիման վրա և պետական չափորոշիչներին համապատասխան, ուսումնական պլաններում առկա են միջմասնագիտական կապեր
- ✓ Իրականացված է բուհում լեզուների և S2S հմտությունների զարգացմանն ուղղված հստակ նախագծեր և միջոցառումներ
- ✓ Ստեղծված և գործարկված է համալսարանական բիզնես ինկուբատորը



### Կրթական միջավայրի կատարելագործում

- ▶ համագործակցային մեթոդներով աշխատանքի կազմակերպման համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում
- ▶ գրադարանի հարստացում և հարմարավետ պայմանների ստեղծում, էլեկտրոնային գրադարանի զարգացում
- ▶ դասընթացի կառավարման վիրտուալ համակարգի ներդրում

### Ակնկալվող արդյունքներ

- ✓ իրկանացված կարիքների գնահատման հիման վրա լսարանները համալրված են անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով
- ✓ ձևավորված են թրեյնինգ լսարաններ
- ✓ հարստացված է գրադարանը, ընդլայնված են էլեկտրոնային գրադարանային ռեսուրսները, ընթերցասրահներում ստեղծված են հարմարավետ պայմաններ ուսումնառության համար
- ✓ ներդրված է դասընթացների կառավարման Moodle բաց հասանելիության համակարգը, պրոֆեսորադասախոսական կազմի նվազագույնը 50%-ը կարողանում է կիրառել համակարգը

### Հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացում

- ▶ գիտահետազոտական կենտրոնի հիմնում և զարգացում
- ▶ դասախոս-ուսանող համատեղ գիտագիտազոտական աշխատանքների իրականացում
- ▶ ասպիրանտական կրթության պայմանների ստեղծում և իրավունքի ստացում
- ▶ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մոտ հետազոտական հմտությունների զարգացում
- ▶ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված կիրառական և հիմնարար հետազոտությունների իրականացում, գիտաժողովների կազմակերպում

### Ակնկալվող արդյունքներ

- ✓ Մշակված են ուսանողների և դասախոսների գիտահետազոտական աշխատանքներով զբաղվելու խրախուսման մեխանիզմներ
- ✓ Հետազոտական հմտությունների զարգացման նպատակով իրականացվում են վերապատրաստման ծրագրեր
- ✓ Մշակված են հետազոտական աշխատանքների գնահատման չափորոշիչներ
- ✓ ԿԳ նախարարությունից ստացված է ասպիրանտական կրթության իրականացման թույլտվություն կամ իրականացվում է միջազգային ծրագիր
- ✓ Գիտահետազոտական կենտրոնի կողմից իրականացված է տարեկան նվազագույնը երկու համաժողով և հրապարակված է ԲՈՀ-ի կողմից հաստատված նվազագույնը երկու գիտական աշխատանքների ժողովածու

### Միջազգային ծրագրերի իրականացում, միջազգային փորձի ներկրում, միջազգայնացում

- ▶ միջազգային կրթական, հետազոտական և գիտելիքների փոխանակման ծրագրերի իրականացման խրախուսում
- ▶ դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացում,
- ▶ համագործակցություն արտերկրյա համալսարանների հետ՝ միջազգային երկակի դիպլոմների և համատեղ այլ ծրագրերի իրականացման նպատակով
- ▶ կրթության բովանդակության վերանայում
- ▶ ներգրավել հիմնական և գիտական աստիճան ունեցող, արևմտյան կրթությամբ և մտածողությամբ պրոֆեսորադասախոսական կազմ

### Ակնկալվող արդյունքներ

- ✓ Գործում է միջազգային համագործակցության բաժին
- ✓ Տրամադրվում է դիպլոմի հավելված՝ ուսանողների շարժունությանը նպաստելու նպատակով
- ✓ Կրկնապատկել միջազգային փոխանակման ծրագրերում ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը

### Ոչ ֆորմալ կրթության ապահովում

- ▶ ուսանողների փափուկ հմտությունների զարգացմանը միտված ծրագրերի իրականացում
- ▶ կարիերայի կենտրոնի դերի ամրապնդում
- ▶ մասնագիտական և ոչ մասնագիտական կամավորական աշխատանքների խրախուսում, հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն

### Ակնկալվող արդյունքներ

- ✓ հիմնված է դասընթացների կենտրոն սերտիֆիկատային ծրագրերի իրականացման նպատակով
- ✓ հիմնված է նախագծերի կառավարման կենտրոն
- ✓ իրականացվում են ուսանողների փափուկ հմտությունների զարգացմանը միտված աշխատաժողովներ
- ✓ գործում են շրջանավարտների աշխատանքի տեղավորման, առաջընթացի գնահատման և հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ,
- ✓ ուսանողների նվազագույնը 60%-ը ուսումնառության տարիների ընթացքում ներգրավվում և կատարում է կարճաժամկետ կամ երկարաժամկետ կամավորական աշխատանք

**Ռեբրենդինգ, ինֆորմացիայի թափանցիկության ապահովում, հասարակայնության հետ կապերի զարգացում և բրենդի ամրապնդում.**

- ▶ էլեկտրոնայի կայքի և տեղեկատվական նյութերի կատարելագործում,
- ▶ սոցիալական մարքեթինգի իրականացում,
- ▶ որակական նոր պահանջներին համապատասխան ուսանողների և դասախոսների հավաքագրմանն ուղղված նպատակային միջոցառումների իրականացում

### **Ֆինանսական կայունություն և անկախություն**

Համալսարանի ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացում՝ ներգրավելով միջազգային ֆոնդեր, ներդրումներ, դրամաշնորհային ծրագրեր, հետազոտական նախագծեր, ինչպես նաև տրամադրելով այլ ծառայություններ (դասընթացներ, խորհրդատվություն և այլն)

### **Ռազմավարական համագործակցությունների ամրապնդում**

Նպատակային կրթական ծրագրերի իրականացում պետական և մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների, ձեռնարկությունների հետ

